



Գիտական խորհրդի նախագահ՝
Հ.Վ.Թորմաջյան

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

**ՇՈՒՇԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՌԻԴԻՏԻ ՆՇԱՆԱԿՄԱՆ
ԵՎ ԱՌԻԴԻՏԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՄԱՆ**

**1. Շուշի տեխնոլոգիական համալսարան հիմնադրամի կողմից անկախ
աուդիտորական կազմակերպության ընտրության կարգը և ներկայացվող
չափանիշները**

«Շուշի տեխնոլոգիական համալսարան» հիմնադրամը (այսուհետ՝ Հիմնադրամ) յուրաքանչյուր տարի պատվիրում է ֆինանսական աուդիտի իրականացում՝ իր ֆինանսատնտեսական գործունեության թափանցիկությունը ապահովելու, ֆինանսական գործունեության արդյունքում առաջացած ֆինանսական արդյունքների արժանահավատությունը հաստատելու համար:

Անկախ աուդիտորն ընտրվում է մրցութային կարգով և հաստատվում հոգաբարձուների խորհրդի կողմից: Տարեկան ֆինանսական գործունեության աուդիտն իրականացնող կազմակերպությունն ընտրվում է մինչև հաշվետու տարվան հաջորդող փետրվարի 15-ը:

Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամների մեկ երրորդի պահանջով կարող է կատարվել արտահերթ աուդիտ:

Հիմնադրամն ընտրում է այն աուդիտորական կազմակերպությունը, որը բավարարում է հետևյալ նվազագույն չափանիշներին.

- Աուդիտորական կազմակերպությունը պետք է ունենա առնվազն 3 տարվա փորձ տվյալ ոլորտում,
- Աուդիտորական կազմակերպության աշխատակիցները որպես աուդիտոր, պետք է ունենան առնվազն 2 տարվա աշխատանքային փորձ: Ցանկալի է, որ աուդիտորական խմբում ներգրավված աշխատակիցները ունենան աուդիտորական միջազգային որակավորման գծով որոշակի մակարդակ (օրինակ՝ էյ-Սի-Սի-էյ, Սի-Փի-էյ, Սի-Այ-էս-էյ),
- Մինչույն աուդիտորական կազմակերպությունը չի կարող 5 տարի անընդմեջ իրականացնել Հիմնադրամի ֆինանսատնտեսական գործունեության աուդիտը:

2. Աուդիտի արդյունքների ամփոփումը

Տարեկան ֆինանսական գործունեության աուդիտի արդյունքները քննարկվում են Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նիստում յուրաքանչյուր տարի՝ հաշվետու տարվան հաջորդող մարտի 25-ից ոչ ուշ: Աուդիտի արդյունքներով ներկայացված եզրակացությունը հրապարակվում է մամուլում:

Արտահերթ աուդիտի արդյունքները քննարկվում են հոգաբարձուների խորհրդի նիստում աուդիտի ավարտից սկսած երկամսյա ժամկետում:

Գրքանկատի փարպեզ չար *Քի. Վեռնիկյան*